Հայաստանի
Հանրապետության
**կենտրոնական բանկ**

# Դրամավարկային քաղաքականության որոշում

12 մարտի, 2024թ.

# 2024 թվականի մարտի 12-ի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի որոշում

**2024 թ. մարտի 12-ի նիստում ՀՀ ԿԲ Խորհուրդը որոշեց**

## վերաֆինանսավորման տոկոսադրույքն իջեցնել 0.25 տոկոսային կետով՝ սահմանելով 8.5%.

ՀՀ ԿԲ կողմից տրամադրվող լոմբարդային ռեպոյի տոկոսադրույքը՝ 10.0%

ՀՀ ԿԲ կողմից բանկերից ներգրավվող միջոցների տոկոսադրույքը՝ 7.0%

# 12-ամսյա գնաճը շարունակել է նվազել՝ 2024 թվականի փետրվարին կազմելով -1.7%: 12-ամսյա բնականոն գնաճը ևս նվազել է՝ հունվարին կազմելով -0.4%:




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ


Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ

# Համաշխարհային տնտեսությունից փոխանցվող գնաճային ազդեցությունները ՀՀ տնտեսության վրա շարունակում են զգալիորեն թուլանալ

**Համաշխարհային տնտեսությունում և գործընկեր երկրներում տնտեսական ակտիվությունը շարունակում է դանդաղել, իսկ տարեկան գնաճը՝ նվազել, այնուամենայնիվ գնաճային միջավայրը մնում է բարձր**

Գնաճը գործընկեր երկրներում և ՀՀ-ում, տ/տ աճ, %




Աղբյուրը՝ երկրների վիճակագրական ծառայություններ

**Համաշխարհային տնտեսական աճի դանդաղման և միջազգային ապրանքահումքային շուկաներում գների տատանողականության հետ կապված առկա են ռիսկեր**

Պարենային ապրանքների միջազգային գներ, (2019/12 = 100)




Աղբյուրը՝ Միացյալ ազգերի պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն (FAO)

# 2023 թ-ի 4-րդ եռամսյակում ՀՀ տնտեսական ակտիվությունը պահպանվել է բարձր մակարդակում

**ինչին շարունակել է նպաստել շինարարության և առևտրի ոլորտների բարձր աճը**




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ

**Արտաքին պահանջարկը դանդաղում է, սակայն ներքին պահանջարկը շարունակում է պահպանվել համեմատաբար բարձր մակարդակում**




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ, ՀՀ ԿԲ

# Հայաստանում գնաճը շարունակում է մնալ ցածր, ինչին հիմնականում նպաստել են ՀՀ ԿԲ կողմից իրականացված զսպող դրամավարկային քաղաքականությունը, արտաքին հատվածից փոխանցվող գնանկումային ազդեցությունները և դրամի արժևորումը

**աշխատուժի առաջարկի ավելացումը որոշակիորեն նպաստել է համախառն պահանջարկի և առաջարկի միջև անհավասարակշռության կրճատմանը**




Աղբյուրը՝ ՀՀ ՎԿ

**ինչն էլ արտահայտվել է  աշխատավարձերի և կոշտ գներով ապրանքների  ու ծառայությունների գնաճի ու գնաճային սպասումների նվազմամբ:**




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

# Բարձր անորոշության պայմաններում, հաշվի առնելով գների կայունության նպատակին հասնելու իր հանձնառությունը, Խորհուրդն իր քննարկումների ընթացքում դիտարկում է բազմաթիվ սցենարներ

**ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը և սցենարների վրա հիմնված, ապագային միտված ուղղորդում**




Աղբյուրը՝ ՀՀ ԿԲ

## Տիպային Ա սցենար

Խորհուրդը քննարկել է սցենարներ, որոնց հիմքում ընկած զարգացումները, այդ թվում՝ դեռևս պահպանվող բարձր գնաճային սպասումները, ինչպես նաև երկրի ռիսկի հավելավճարի հետ կապված անորոշությունները, պահանջում է քաղաքականության ավելի կոշտ արձագանք՝ միջնաժամկետում ներքին պահանջարկը զսպելու, գնաճային սպասումները խարսխելու և գների կայունության նպատակն ապահովելու համար:

# Բարձր անորոշության պայմաններում, հաշվի առնելով գների կայունության նպատակին հասնելու իր հանձնառությունը, Խորհուրդն իր քննարկումների ընթացքում դիտարկում է բազմաթիվ սցենարներ

**ՀՀ ԿԲ վերաֆինանսավորման տոկոսադրույքը և սցենարների վրա հիմնված, ապագային միտված ուղղորդում**




## Տիպային Բ սցենարներ

Խորհուրդը քննարկել է սցենարներ, որտեղ հնարավոր տնտեսական զարգացումները, այդ թվում՝ աշխատուժի առաջարկի շարունակական ընդլայնումը և պահանջարկի որոշակի թուլացումը, կձևավորեն ավելցուկային առաջարկ՝ հանգեցնելով գնաճի ցածր մակարդակի երկար պահպանմանը: Սա ենթադրում է քաղաքականության տոկոսադրույքի ավելի արագ և մեծ չափով նվազման ուղի՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճը նպատակային ցուցանիշի շուրջ կայունացնելու համար:

# 2024 թվականի մարտի 12-ի դրամավարկային քաղաքականության տոկոսադրույքի որոշում

## Հավասարակշռելով վերը նշված երկու ուղղությամբ ռիսկերը՝ ՀՀ ԿԲ խորհուրդը որոշեց շարունակել դանդաղ տեմպերով աստիճանական թուլացումը

**Խորհուրդը կշարունակի մշտադիտարկել տնտեսության զարգացման սցենարները և պատրաստ է ձեռնարկել համարժեք գործողություններ՝ միջնաժամկետ հորիզոնում գնաճի 4 տոկոս մակարդակի և գների կայունության նպատակի ապահովման համար:**


Հայաստանի
Հանրապետության
կենտրոնական բանկ
Շնորհակալություն